



Մ. ՏԵՐ-ԳԱՆԻՆԵԼՅԱՆ

Գ Ա Ն Ձ Ա Ս Ա Ր



Թե հայ ժողովուրդը դարերի ընթացքում կարողացել է կուլ չզնալ իր շորս կողմը փոթորկող արհամիրքների, եթե նա անվերջ ենթակա լինելով օտարների սրածուխյուններին ու ավերածություններին պահպանել է իր ազգային դեմքը, ապա հայ ժողովրդի՝ իր ինքնուրույնության համար մեղած այդ պայքարին ոչ պակաս մասնակցություն են ունեցել նաև վանքերը: Արաբական արշավանքների, մոնղոլական ավերածությունների, պարսկական խժոժությունների ժամանակ անգամ, երբ թվում էր, թե հասել է վերջին ժամը, Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի վառած ճրագը մեր վանքերի խուցերում շարունակել է առկայծել, այնտեղից իր լուսո ճառագայթներն ուղղելով դեպի շրջապատող խավարը: Այդ վանքերում է բաբախել հայի կրթական կյանքի զարկերակը և, քիչ չին դեպքերը, երբ այնտեղ են դարբնվել օտար բռնակալների դեմ մղվող պայքարի, հայ ժողովրդի ազատագրական ճիգերի ծրագրերը:

Այդօրինակ մի օջախ է հանդիսացել և մասնավորապես Ղարաբաղի հայության ազատագրական պայքարի համար, Գանձասարի հռչակավոր վանքը, որտեղ նստում էին Աղվանից կաթողիկոսները:

Պատմական տվյալների համաձայն Աղվանից կաթողիկոսությունն սկսվել է Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսից և վերջացել է 1815 թվին:

7-րդ դարում, երբ արաբները տիրում են Աղվանից երկրին և նրա մայրաքաղաք Պարտավին, Աղվանքը կորցնում է իր քաղաքական անկախությունը, իսկ Աղվանից կաթողիկոսությունը տեղափոխվում է «մայրաստանի» աշխարհն Արցախայ:

Իր 15 դար տևող գոյության ընթացքում Աղվանից կաթողիկոսությունն աստանդական

կյանք է վարել, աթոռը հաստատելով այս կամ այն վանքում, մինչև որ վերջնականորեն հաստատվել է Գանձասար վանքում:

Գանձասարի վանքը կառուցված է 4168 «տնաչափ» բարձրություն ունեցող մի սարահարթի վրա, ամբողջապես սրբատաշ, կարմրագույն քարից, շորս կամարներով. նրա երկարությունն է մոտ 17 մետր, իսկ լայնությունը՝ 12 մետրից ավելի է:

Վանքի ներսում, ավազանից վերև, կա մի ընդարձակ արձանագրություն, որը ցույց է տալիս, թե վանքը կառուցել է «նուստ ծառայ Աստուծոյ» Զալալ դավլա Հասանը «որդի Վախտանգայ, թոռն մեծին Հասանայ, բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի և ի յոգնասահման նահանգի. զի հայրն ի վախճան կենաց ելից իւր աստեացս անդարձ կտակի հաստատեաց ինձ և մաւր իմոյ Խորիշահի՝ որ էր դուտոր մեծ իշխանաց իշխանին Սարգսի, զի շինեսցուք զեկեցեղիս ի գերեզմանատուն հարց մերոց ի Գանձասար, որ սկսեալ մեր ի Ռկն թուին հայոց»: Այսպիսով վանքի կառուցումն սկսվել է 1216 թվին և ավարտվել է 1238-ին:

Վանքն ունի մի գեղեցիկ գավիթ, սրբատաշ քարից: Ինչպես արձանագրությունն է ասում, այդ գավիթը կառուցվել է 1266 թվին. «Թուին ԶԺն (1266) կամաւն Ամենակալի Աստուծոյ ես Զալալ Դաւաս, որդի Վախտանգայ կողմանցն Արցախայ և ամուսին իմ Մամբան թոռն Բաղուց թագաւորին և հարազատ որդին իմ Աթարակն յետ կատարման եկեղեցոյս հիմնարկեցաք ժամատունս և բազում աշխատութեամբ աւարտեցաւ...» և այլն:

Խաչներ Աղվանից երկրից ժառանգություն էր մնացել Հասան Զալալյան տոհմին. այնտեղ իշխում էին Հասան-Զալալյան մեկիքները, իսկ Գանձասարում կաթողիկոսական

աթոռին գահակալում էին նույն տոհմի եկեղեցականները:


18-րդ դարի սկզբներին Պարսկաստանում տեղի են ունենում մեծ փոփոխություններ. 1722—23 թվերին, Պետրոս Մեծի օրով, ռուսական զորքերը գրավում են Կասպից ծովի ափերին գտնվող պարսկական մի շարք քաղաքներ ու գավառներ, ինչպես՝ Դարբանդ, Բաքու, Գիլան, Մազանդարան, Աստապատ և այլն:

Օսմանյան կառավարությունը ռուսական

Հյուսիսինը և Դիզակում Մելիք Եգանը:

Նրանք տեսնելով Պարսկաստանի անդորությունը, նրա քայքայվելը, որոշում են օգտվել ստեղծված նպաստավոր դրությունից, ազատվել իրենց վրա ծանրացած պարսկական լծից ու իրագործել հայերի բաղձանքը՝ հայկական անկախ պետություն հիմնել:

Մտկայն որքան էլ Պարսկաստանը թույլ էր, այնուամենայնիվ անկախ Հայաստանի գաղափար փայփայողները հասկանում էին, որ իրանք մենակ անկարող են այդպիսի մի



Գանձասարի վանքը

առաջխաղացումից մի քանի քաղաքներն ամրացնելու և թե քայքայվող Պարսկաստանից բաժին պոկելու նպատակով իր զորքերը պարսկական հողերն է մտցնում ու համեմատաբար կարճ ժամանակամիջոցում գրավում ամբողջ Ատրպատականը, Նախիջևանը, Երևանը, Թիֆլիսը, Գանձակը և հասնում մինչև Ղարաբաղ, որ իշխում էին Ղարաբաղի մելիքները՝ Գյուլիստանում Մելիք-Բեղլարյան Մելիք Աբով Բ., Զարբերդում՝ Մելիք Իսրայելյան Մելիք Նսային, Խաչենում՝ Հասան-Ջալալյան Մելիք Ալավերդին, Վարանդայում՝ Մելիք-Շահնազարյան Մելիք

մեծ քաղաքական ծրագիր իրագործել, հարկավոր էր մի որևէ մեծ ուժի աջակցությունն ալդ գործին:

Ո՞րն էր այն ուժը, որին հենվել, որին վստահել կարելի էր: Դա Ռուսաստանն էր և նրա թագավոր Պետրոս Մեծը, որ 17-րդ դարի վերջերին միտք էր հղացել եվրոպական պետությունների հետ միասին արևելյան քրիստոնյաներին ազատել «անօրենների» իշխանությունից, սրպիսի միտքը նա իր գեապանի միջոցով պաշտոնապես հայտնել էր լեհաստանի կառավարության:

1701 թվին Ղարաբաղի մելիքները իրենց

ձայնը լսեցնել են տալիս Պետրոս Մեծին՝ Խարայել Օրու միջոցով, որը կայսրին հայտնում է, թե հայերը Շամախու կողմերում կազմ ու պատրաստ ունեն 17.000 հոգի, Ղարաբաղում 60.000, իսկ Պարսկական Հայաստանի 17 նահանգները կտան ավելի քան 100.000 հոգի: Բացի այդ գինական ուժերը, որ հայերը կարող են հանդես բերել, Օրին հայտարարում է, թե հայերը հանձն են առնում իրենց ծախսով պահել ուսաց այն զորքերին, որոնք կըզան հայերին պարսից լծից ազատելու: Իսկ այդ լուծը թեթև չէր, մանավանդ որ հենց այդ միջոցներում Պարսկաստանի շահ Հյուսեյին Սուլթանը, իր երկրի այդ չափազանց ապիկար պետը, հրաման էր արձակել խիստ ու անողորմ մարդահամար կատարել՝ առանց այն էլ ծանր հարկերն ավելացնելու համար:

Ռուսաց արքունիքի հետ ունեցած այս հարաբերությունների մեջ, ահա, շատ մեծ դեր է ունեցել Գանձասարը, որտեղ և նստում էր Աղվանից կաթողիկոսը:

Այդ շրջանում Աղվանից կաթողիկոսական դահլիճը ժառանգել են մի շարք աչքի ընկնող դեմքեր: Դրանցից մեկն էր Սալյի կաթողիկոսը, որի մասին Լեոն իր «Հայոց Պատմության» 3-րդ հատորում գրում է. «Սալյին կաթողիկոսանալուն պես իր Գանձասարը դարձնում է մի քաղաքական կենտրոն և լեռնային իշխանների մի խորհրդարան, ուր դիվանագիտական հարաբերություններ էին մշակվում և ռազմական ծրագրեր քննվում: Այդ ժամանակից է, որ Գանձասարն այնքան զեղեցիկ անուն է ձեռք բերում ազատագրական պատմության մեջ»:

17-րդ դարի երկրորդ կեսերին Սեմեոն անունով մի եպիսկոպոս, Զրաբերդում, Գանձասարից մի օրվա հեռավորության վրա, հիմնում է մի վանք «Երից մանկանց» անունով, և այնտեղ հաստատվելով, ինքնազուլս, իրեն կաթողիկոս է հայտարարում: Այդպիսով ստեղծվում է հակաթու կաթողիկոսություն, որ տևում է մոտ 150 տարի (մինչև 1800 թիվը), և իր գոյության ընթացքում մեծ վնասներ է հասցնում այն ազատագրական գործին, որ Գանձասարում էր կոխվում «Հայոց ժողովի» ձեռքով:

Հակաթուությունն ստեղծում է ներքին դժուրություններ: Հակաթու կաթողիկոսությունների շուրջը համախմբվում են կողմնակիցներ, ստեղծվում հակամարտ կուսակցություններ:

«Երից մանկանց» վանքը դառնում է «օտարամոլության և մատնության օջախ»: Այդ «օջախից» խիստ զգուշանում էին ուսուսպահ մեկիքներն ու Գանձասարի կաթողի-

կոսը, որոնք ընդհանրապես չափազանց զգույշ էին ու խիստ գաղտնագահ:

Սալյի կաթողիկոսը 1718 թ. սեպտեմբերի 24-ին գրում էր Պետերբուրգ՝ Մինաս վարդապետին, թե շատ խիստ պետք է պահել գաղտնիքը. «Իմացեք, որ եթե իմ նամակներից մեկն ընկնի լրտեսների կամ առհասարակ շար մարդու ձեռք, այդ կլինի մեր կորուստը և այս տունն էլ (այսինքն՝ Գանձասարը) քարուքանդ կդառնա»:



1762 թվին գահ է բարձրանում Նկատերինա 2-րդը:

Նկատերինան պարզ ցույց տվավ, որ տրամադրություն ունի իրագործելու Պետրոս Մեծի նպատակը՝ իջնել դեպի հարավ, գրավել Վրաստանն ու Հայաստանը:

Այդ ժամանակ Ռուսաստանի հայոց առաջնորդն էր Հովսեփ Արքեպիսկոպոս Արղուվյանը, որ կայսրուհու ուշադրությանն էր «արժանացած», շատ մոտիկ էր արքունիքին և այն ժամանակի խոշոր դեմքերից մեկին՝ կայսրուհու սիրելի Պատյոմկինին:

Այդ հայրենասեր եկեղեցականն իր ամբողջ էությունը նվիրվում է գործին: Նա բարձրացնում է հայոց հարցը Նկատերինայի առաջ, կապ է հաստատում հայկական գաղութների հետ և արքունիքում հող պատրաստում:

Հովսեփ Արքեպիսկոպոսի անձնվեր աջակիցներն էին դարձյալ Ղարաբաղի ուխտապահ մեկիքներն ու Գանձասարի կաթողիկոսը: Նրանք գործում են ոգի ի բոլին, սերտ կապ են պահպանում Արղուվյանի հետ, նամակներ գրում: Այս բոլորը տեղի էին ունենում Գանձասարում. Գանձասարն էր այն երակը, որով հայերի բաղձանքն ուղղվում էր դեպի Պետերբուրգ:

Մյուս կողմից կարծես՝ ուսաց կառավարությունն էլ իրոք վճռել էր ակտիվ քայլեր անել: 1783 թվի ապրիլին իշխան Գ. Ա. Պատյոմկինը, որ ապագա Հայաստանի գլուխ լինելու փափազն ուներ, հրամայում է Կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար զեդապետ-պարուչիկ Պ. Մ. Պատյոմկինին որպեսզի օգնի Ղարաբաղի մեկիքներին՝ Իբրահիմ խանին իշխանությունից զրկելու և Ղարաբաղում հայկական իշխանություն հիմնելու:

Բայց այդ հրամանն ինչ-ինչ պատճառներով չի իրագործվում:

Վերջապես անկախության համար մարտնչողներին ավետիք է հասնում, թե 1784

թվի ամառն ռուսական զորքերը կսկսեն պատերազմական գործողությունները:

Դարաբաղի Իբրահիմ խանն զգում էր, որ իր խանական իշխանության դեմ դավեր են նյութվում. նրա զործակալները տեղեկություններ էին հաղորդել ռուսաց ռազմական պատրաստությունների մասին և այն մասին, որ Դարաբաղի մեկիքները Գանձասարում գաղտնի խորհրդակցություններ են ունենում և որ հայերն ու վրացիները ռուսներին հրավիրելու գործում համերաշխ են: Խանն ինքնապաշտպանության միջոցների է դիմում: Նա ամենից առաջ ամրացնում է Շուշու բերդը, ապա հայ-վրացական համերաշխությունը խորտակելու համար դրդում է Ավարիայի տեղի Օմար խանին, որի քրոջ ամուսինն էր ինքը, հարձակվել Վրաստանի վրա:

Օմար խանը, թե յուր մեծանձն փեսայի կամքը կատարելու համար և թե կոդպուտի տենչով արեցած, լեռնականների ահագին բազմությամբ հարձակվում է Վրաստանի վրա, սոսկալի ավերածություններ ու կոտորածներ անում այնտեղ և մեծ թվով զերիններ տանում, որոնց մեջ և բավականաչափ հայեր:

Վրաց շերակ իշխանը 300 ռուսական զինվորով շտապում է Օմար խանի առաջը փակելու, սակայն խուսափում է նրա հետ ընդհարվելուց:

Անկախ Հայաստան ստեղծելու դադափարով տոգորված ուխտապահ մեկիքները սրբանով գործը վերջացած չեն համարում. նրանք գտնում են, որ հայերի փրկությունը օտարների լծից ազատվելը և ռուսաց հովանավորությամբ անկախ հայրենիք ունենալն է. ուստի դարձյալ հավաքվում են Գանձասար գաղտնի խորհրդակցության:

Այդտեղ «Հայոց ժողովի» որոշմամբ՝ Հովհաննես կաթողիկոսի և մյուս ականավոր մարդկանց մասնակցությամբ մի նոր աղերսագիր են ուղարկում Նկատերինա Զ-րդին, խնդրելով, որ շտապեն զորքեր ուղարկելու:

Խորհրդակցությունից հետո գրությունն ամրացնում են ցուպի մեջ ալմաստ, որ ոչինչ չնկատվի և մի հավատարիմ, արագազնաց սուրհանդակի ձեռքով ուղարկում Գանձակ՝ հակաթու Իսրայել կաթողիկոսին, նրանից ևս թղթեր վերցնելու:

Այստեղից սկսվում է մի նոր ձախողություն:

Երբ Գանձասարից սուրհանդակը ճանապարհվում է դեպի Գանձակ, միևնույն օրը մի ուրիշն էլ ճանապարհվում է դեպի Շուշու: Դա Հովհաննես կաթողիկոսի հարազատ եղբայր՝ Հասան-Ջալալյան Ալլահ-Կուլի բեկն

էր, որ նույնպես մասնակցել էր Գանձասարի գաղտնի խորհրդակցությանն ու ծանոթ էր գործի մանրամասնություններին: Նա ներկայանում է Դարաբաղի հոգեհո Իբրահիմ խանին ու պատմում բոլորը, ինչ որ տեղի էր ունեցել:

Խանը դավաճանի ցուցումներով գրում է Իսրայել հակաթու կաթողիկոսին ու հայտնում թե այսպիսի մի մարդ է գալու Գանձակ, ցուպի մեջ թաքցրած թղթերով և եթե այդ թղթերը նա բռնագրավի ու իրեն ուղարկի, ապա խոստանում է Գանձասարի (Աղվանից) կաթողիկոսական աթոռը նրան հանձնել:

Նվ այդ անարժան եկեղեցականը, որ խաչ ու ամետարանով երդվել էր, թե ինքը ևս նվիրված է հայ ազատագրման գործին ու հավատարիմ կմնա ընդմիշտ, շլացած կաթողիկոսական աթոռով ու լցված ատելությամբ՝ դեպի Հովհաննես կաթողիկոսը, կատարում է Իբրահիմ խանի կամքը, որն անձամբ իր ձեռքը մինչև Գանձակ մեկնել էր կարող, այնտեղ իրեն ուժեղ հակառակորդ ունենալով Ջալալ խանին:

Դավաճան Ալլահ-Կուլի բեկը, ճիշտ է, իր արժանի պատիժն ստանում է հետագայում, նրան սպանում են, գլուխը կտրում ու մարմինն անհետացնում, բայց վատ գործն արդեն արված էր, Իբրահիմ խանի համար այժմ շատ գաղտնիքներ էին բացված և դիտեր, թե այժմ ինչպիսի զենքերով պիտի կռվեր իր ոխերիմ թշնամիների՝ Գանձասարի կաթողիկոսի և ուխտապահ մեկիքների դեմ:

Բոլոր անցուղարձերին լավ ծանոթանալուց հետո նա լուռ էր մնում, ձեռքներով թե ոչնչից տեղյակ չի: Որոշ ժամանակից հետո բարեկամաբար Շուշի է հրավիրում ուխտապահ մեկիքներին՝ մեկիք Մեժլումին, մեկիք Աբովին ու մեկիք Բախտամին, իբր թե կարևոր խորհրդակցության համար:

Երբ մեկիքները հասնում են Շուշի, խանը բանտարկում է առաջին հրկսին՝ իսկ մեկիք Բախտամին հանձնում է պարսից կառավարության ձեռքը, որպես քաղաքական հանցավորի, որ ձգտում է ռուսներին հանձնել պարսկական հողերը: Սրան տանում են ու բանտարկում Արդաբիլի բերդում:

Մեկիք Մեժլումին և մեկիք Աբովին բանտից ազատում է Թյուլի Արզումանը իր երկու ընկերներով, դրանք էին՝ Դավի Մահրա-սան (Ավագ վարդապետը) և զարգար Մելքումը: Սրանք մի գիշեր մտնում են Շուշի, հարձակվում բանտի վրա, դռները կոտրում ու մեկիքներին ազատում:

Ինչ Հովհաննես կաթողիկոսին է վերաբե-

րում, ապա Իբրահիմ խանը նրա հետ հաշիվը վերջացնում է արևելյան սովորություններով: Կաթողիկոսը դավաճանաբար ձեռքակալվում է, տարվում Շուշի, բանտ նետվում, որտեղ և սպանում են թունավորելով (1788 թ.):

Հասան-Ջալալյան իշխաններից նշանավոր էին եղել երեք եղբայրներ՝ Երեմիա կաթողիկոսը, Վելիջան-բեկ Գ և Մուլքի բեկը: Հենց Մուլքի բեկի թոռնորդին էր Հովհաննես կաթողիկոսը, որն այսպիսի եղբրնական վախճան ունեցավ: Հովհաննես կաթողիկոսին հաջորդում է Սարգիս կաթողիկոսը:

Սակայն Իբրահիմ խանի գաղտնի և ուժեղ հաղածանքը Գանձասարի կաթողիկոսի և ապրող Հասան-Ջալալյան տոհմի դեմ դրանով չի վերջանում:

Դեռ 1781 թվին նրա ձեռքն են ընկնում Սարգիս կաթողիկոսի երկու եղբայրները, որոնցից մեկին, Դանիել բեկին, կտոր կտոր անել է տալիս ասիական բարբարոսությունը, ծաղրելով թե «թող ուտաները գան և ազատեն քեզ»:

Դանիել բեկի քույրը կարողանում է թույլտրվություն ստանալ ու իր եղբոր աճյունը հավաքելով՝ թաղել Շուշու հայոց գերեզմանատանը*):

Սարգիս կաթողիկոսը տեսնելով, որ Իբրահիմ խանն իր շուրջը ևս թակարդներ է լարում և եթե ձեռքն ընկնի, այլևս փրկության հույս չպետք է ունենա, դիմում է ուխտապահ մեկիքներին ու մի ամպոս օր Գանձակ փախչում իր նահատակ եղբոր՝ Դանիել-բեկի որդի, 17 տարեկան Բաղդասարի հետ:

Սարգիս կաթողիկոսի հակառակորդներին էլ հենց այդ էր հարկավոր: Նրա փախուստից հետո Գանձասարի կաթողիկոսական աթոռն են նստեցնում Խորաշել անունով մեկին: Սարգիս կաթողիկոսն այլևս Գանձասար վերադառնալ չէր կարող թեկուզ նրա համար, որ Շուշում դեռ իշխում էր Իբրահիմ խանը: Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսի համաձայնությամբ նա տեղափոխվում է Հաղբատի վանքը, ուր մնում է որպես վանահայր:



Բայց շուտով քաղաքական պայմաններ փոխվում են, ուտաները Պարսկաստանի լծից ազատագրում են բավական հույեր, որոնց թվում և Ղարաբաղը: Իբրահիմ խանը Ղարաբաղի իշխանությունն իր ձեռքում պահելու համար հանդիսավոր երդվում է տալիս, թե

*) 60 տարի հետո Դանիել-բեկի որդի Բաղդասարը, որ արդեն Ղարաբաղի մետրոպոլիտն էր, հոր գերեզմանի վրա փառավոր շիրիմ է կանգնեցնում:

ինքը մինչև վերջ հավատարիմ հայատակ կմնա Ռուսաստանին: Սակայն 1806 թվին դրժելով երդումը, վերցնում է իր ընտանիքը և իր համախոհների հետ փախչում Պարսկաստան, միանալու Աբբաս-Միրզայի բանակին՝ ռուսաց դեմ: Այդ միջոցին իր հեծելախմբով Շուշում էր գտնվում Մելիք Ջումշուդը. նա նկատում է խանի փախուստը և իսկույն հաղորդում բերդապահ ռուս ենթադնդապետին, որը մի խումբ ձիավորներով հասնում է նրանց ու բոլորին կոտորում, բացի կանանցից:

Իբրահիմ խանի սպանվելը հնարավորություններ է ստեղծում նրա գաղանկություններից փախած հայերի համար վերադառնալու իրենց հայրենի վայրերը: Եվ սկսվում է մի հետադարձ շարժում:

Սարգիս կաթողիկոսն, ի հարկե, բացառություն կազմել չէր կարող, նա ևս շտապում է վերադառնալ իր պապերի կառուցած վանքը՝ Գանձասար. բայց նախքան վերադառնալը նա Գանձասար է ուղարկում իր եղբոր որդի Բաղդասար վարդապետին:

Վերջինս Գանձասար գալով ողբալի վիճակում է դառնում տարիներ առաջ շեն վանքը՝ տաճարը լցված աղբով, շինությունները քանդված: Նա ձեռնամուխ է լինում վանքի շինարարական աշխատանքներին, մաքրում է վանքը, նորոգում ավերված շինությունները, միաբանություն հավաքում և կենդանացնում վանքը:

Նրկարատե անտերություն հետևանքով վանքի կալվածները հափշտակել էին Իբրահիմ խանի համախոհները: Բաղդասար վարդապետը անեղկույտ պայքարում է դրանց դեմ և հոտ ստանում վանքապատկան բոլոր կալվածները, որոնց թվում և նշանավոր ջրաղացաքարերի հանքը: Այնուհետև նա իր մոտ է հրավիրում Հաղբատում ապրող հորեղբորը՝ Սարգիս կաթողիկոսին, բազմելու Աղվանից կաթողիկոսության թափուր գահին:

1815 թվին վերջ է տրվում Աղվանից կաթողիկոսությանը և Սարգիս կաթողիկոսն ստանում է մետրոպոլիտի կոչում, որպիսի պաշտոնում և մնում է մինչև իր մահը, այսինքն՝ մինչև 1828 թիվը:

Նրանից հետո մեկիքներն ու ժողովուրդը դիմում են Էջմիածին՝ Եփրեմ կաթողիկոսին, խնդրելով Սարգիս մետրոպոլիտի (կաթողիկոսի) փոխարեն նշանակել նրա եղբորորդի Բաղդասարին. Եփրեմ կաթողիկոսը հարգելով դիմումը՝ Բաղդասարին Էջմիածին է կանչում, նրան մետրոպոլիտության աստիճան տալիս 1830 թվին ու նշանակում Գանձասարի թեմի առաջնորդ:

Ռուսական իշխանությունը եթե ոչ կատարյալ, ապա բավականաչափ խաղաղություն էր մտցրել իր տիրած երկրներում. Ղարաբաղը եւ, թեև դեռևս զանազան խան-զադաների, աղաների, բեկերի քմահաճույքին ենթակա, սկսել էր փոքր ինչ ազատ շունչ քաշել: Բաղդասար մետրոպոլիտը սկսում է կրկնակի հռանդով իր շինարարական գործը. նա կառուցում է երկհարկանի շենք և Գանձասարը դարձնում Արցախի մտավոր կենտրոն, կրթական օջախ:

Ինքը, մետրոպոլիտը, մեծ կրթություն չունեւ: Նա նախքան հոգևոր կոչումն ընդունելը, ինչպես տեսանք, Սարգիս կաթողիկոսի հետ փախել էր Հաղբատ. այստեղից նա գնում է Թիֆլիս, որտեղ ուսում է ստանում Սերովբե Պատկանյանի մոտ. նա ուսումնասիրում է քերականություն, ճարտասանություն, կրոն, Ս. Գիրք...

Բաղդասար մետրոպոլիտը խելոք, բնածին տաղանդի ու անսպառ եռանդի տեր մարդ էր: Նա շատ լավ գիտեր, որ Ղարաբաղը խարխալում է տգիտության խավարում, որ գրագետ մարդկանց ճրագով են որոնում և ժողովրդին հարկավոր են փոքր ի շատե գրաճանաչ քահանաներ և այդ նպատակով նա իր ժամանակի նշանավոր Հովսեփ վարդապետ Տեր-Ավագյանին հրավիրում է Գանձասար, ապա Գանձասարից ուղարկում Ս. Հակոբա վանքը, ոչ հեռու Գանձասարից:

Մետրոպոլիտ Քաղիադյանը 1843 թվին կալկաթալում լույս ընծայած իր «Ճանապարհորդութիւն ի Հայս» գրքում գրում է, որ Շուշում նա հանդիպել է Հովսեփ վարդապետ Արցախեցուն, որը մեծարվում էր «իմաստասեր», «գիտնական», «վարժապետ» տիտղոսներով:

Հովսեփ գիտնականի մոտ են սովորել «բոլոր այն մարդիկ, որոնք հետո Շուշում դարձան լավ գրագետի համբավ փայելող քահանաներ», գրում է մեր ակնաւոր պատմագիրներից մեկը: Շուշու մեծատուններն իրենց երեխաներին ուղարկում էին

Գանձասար կամ Ս. Հակոբա վանքը, ուսանելու Հովսեփ վարդապետի մոտ:

1836 թվի Պոլսեցիների օրենքով Գանձասարը դադարում է Ղարաբաղի թեմի հոգևոր վարչության կենտրոնը լինելուց: Բաղդասար մետրոպոլիտը նշանակվում է Արցախի թեմի առաջնորդ և տեղափոխվում Շուշի: Գանձասարը մնում է թափուր: Բայց որպեսզի իրենից հետո բոլորովին մոռացության չմատնվի, մետրոպոլիտը Գանձասարում և Ս. Հակոբա վանքում վանական կառավարչություններ է հիմնում, որոնք անմիջապես իրեն էին ենթարկվում:

Բաղդասար մետրոպոլիտը մեռավ 1854 թվին: Նրա մահից հետո Գանձասարի վանքը շարունակում է պահպանել իր նախկին հմայքը, սակայն հետզհետե անշքանում է և դառնում միայն ուխտատեղի:

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանն իր «Արցախ» գրքում մանրամասնորեն տալիս է վանքի ներքին ու արտաքին մասերում գրված արձանագրությունները: Բազմաթիվ են այդ արձանագրությունները, որոնք պարունակում են հոդերի, այգիների, կալվածքների նվիրաբերության հիշատակությունների և նվիրատուների անունները, որոնք «անմահացրել» են իրենց անունները պատերի սրբատաշ քարերի վրա:

Շատ են վանքի կալվածք թաղված կաթողիկոսների գերեզմանաքարերի արձանագրությունները: Այստեղ է գտնվում նաև Բաղդասար մետրոպոլիտի գերեզմանը, որի վրա կա հետևյալ արձանագրությունը.

«Այս է տապան մետրապոլիտին
Բաղդասարի մեծի արհին
Կայսեր պսակ հոնապետին
Տանս Աղուանից Հայոց ազգին,
Յազգէ Զալա մեծ իշխանին.
Տեսոն Արցախական աշխարհին,
Թուին ՌՅԳ, 1854 Գ. Յուլիսին»:

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանն իր «Արցախ» գրքում գրում է, որ 1895 թվին Գանձասար գալով, նա տեսավ, որ վանքն անուղադրության է մատնված և գտնվում է կիսախարխուլ վիճակում:

